

Ս. ԱճԻՅԱՆ

«ԿԱ» ՃՅՈՒՂԻ ՄԻ ՆՈՐ ԲԱՐԲԱՌ (ԿԵՍԱՐԻԱՅԻ)

• Հայերենի բարրապահության դասականության հարցը վաղուց ի վեր դրադեց-
րել է հայագետներին: Իսկա Արսեն Այալյանը 1866 թ. Վիեննայում
հրատարակած «Քննական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայե-
րէն լեզուի» արժեքավոր աշխատութեան մեջ կատարել է առաջին փորձը՝
աշխարհագրական սկզբունքից ելնելով: Նրա դասակարգումը հետեւյալն է.

ա) միջ. դիրք. Հայաստան (Վան, Միջագետք և այլն).

բ) Կոստանդնուպոլիս—Փոքր Ասիա.

գ) Արեւմտյան Լեւոստան—Առտիար.

դ) Արեւելյան Հաշտարխան—Պարսկաստան, որ կձգվի Ռուսաստանէն
մինչև Հնդկաստան» (էջ 166):

Պրոֆ. Բ. Պատկանյանը 1869 թ. լույս քնծայած «Исследование
о диалектах армянского языка» աշխատութեան մեջ որոշ պարզու-
թյուն է մտցնում այս հարցի ուսումնասիրութեան մեջ: Լստ նրա՝ հա-
յոց լեզվի բազմազան բարրապահներն ու խոսվածքները դարելի է բա-
ժանել հիմնականում երկու խմբի՝ արեւելյան և արեւմտյան: Առաջինի
համար տարրերիչ հատկանիշ է ծառայում ներգոյական հոլովը (locativus),
ու՛մ, ր՛մ, աւ-սո՛ւ, որ երկրորդ խմբում նման է «մեջ» կապով կազմվող հո-
լովին: Այնուհետև սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակ-
ներն արեւելյան խմբում բաղադրյալ են և կազմվում են ներգոյական հոլո-
վի վերջավորութեանից, որը կցվում է բայարմատին՝ միակցվելով օժան-
դակ բայի հետ, իսկ արեւելյան խմբում՝ կու, կը, կի, կ՝ մասնիկներով,
որոնք կցվում են գրաբարյան այդ նույն ժամանակներին՝ առանց օժան-
դակ բայի: Կու, կը, կի, կ՝ մասնիկներն արեւելյան խմբի բարրապահներում
կազմում են ապառնի (պայմանականի) ժամանակը (էջ 17):

Կարծես թե սկզբունքը ձևաբանական է, բայց այդ միայն թվում է:
Իրականում երկու խմբերի տարրերից գծերի հիշատակումն ավելի շուտ
աշխարհագրական բաժանումը հիմնավորելու համար է արված:

Վերոհիշյալ աշխատութեան մեջ ուղադրութեան արժանի մի կարեւոր
կետ կա: Պրոֆ. Պատկանյանը, խոսելով իրեն ծանոթ 8 բարրապահներից մե-
կի՝ Խոյի բարրապի մասին, նշում է, որ դա նման է Դարարաղի բարրա-
պին, բայց ունի առանձատկութիւններ, որոնցից է՝ ւ վերջավորու-
թյամբ սահմանական եղանակի ներկայի կազմութեանը փոխանակ ու՛մ,
ու՛մ, ման վերջավորութիւնների, օրինակ՝ փխչեսըմ, կնչեսըս, տրնեսայ:
Այս երեւոյթը, նրա բացերով ասած՝ «առայում անբացատրելի է»:

Մեր կարծիքով պրոֆ. Պատկանյանը Խոյի բարրապը (սէ՛ ճյուղ)
շփոթել է Հադրութի բարրապի հետ (ս՛Ս ճյուղ), որի առանձին գոյու-
թյունը որպէս բարրապ բնորոշում է և պրոֆ. Հ. Աճառյանը:

Հետազայում նույնպէս հայերենի բարրապների դասականության փորձեր

են ևողել, սակայն այդ հարցի գիտական լուծումն սպասում էր իր մանրակրկիտ հետազոտողին:

Ականավոր հայագետ պրոֆ. Հ. Աճառյանին է պատկանում այդ հարցի գիտական լուծման պատիվը: Հայ բարրառագիտություն մեջ դարագլուխ կազմող «Classification des dialectes arméniens» (Փարիզ, 1909) աշխատության մեջ նա հրաժարվում է աշխարհագրական դասակարգումից և տալիս է հայ բարրառների դասակարգման գիտական սկզբունքը՝ ձևաբանական հատկանիշը (սահմ. եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակների կազմությունը): Առաջնորդվելով այս սկզբունքով՝ պրոֆ. Աճառյանը նախօրոք հայտնի «Ում» և «Կը» ճյուղերին ավելացրեց 3-րդ ճյուղը, որն անվանեց «Էլ» ճյուղ:

Զնայած պրոֆ. Աճառյանի դասակարգման այս եղանակը առարկությունների է հանդիպել (օրինակ՝ Գր. Տեր-Պողոսյանն իր «Համարիկի բարբառը» աշխատության մեջ ձևաբանական հատկանիշով դասակարգելը սխալ է հաճարում), բայց բարրառագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դա միանգամայն գիտական է ու կենսունակ, որ նրանով առաջնորդվելով միայն կարելի է հայտնաբերել հայերենի նոր բարրառներ ու բացահայտել բարբառային բազմաթիվ օրինաչափական երևույթներ:

Բայց պետք է նկատել, որ պրոֆ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն» (Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911 թ.) աշխատությունը հայագիտության վերջին խոսքը չէր, այլ, ընդհակառակը, ինչպես նկատել է հայագետ Մեյեն վերոհիշյալ աշխատության ֆրանսերեն լեզվով լույս ընծայվելու կապակցությամբ գրած գրախոսականում, «...Աճառյանի աշխատությունը կատարված ուսումնասիրությանց ամփոփումը չէ, այլ ամենից ավելի կատարելի քննությանց ծրագիրը»¹: Եվ, իսկապես, գիտությունն ապացույցեց այդ: Առաջին հերթին հենց ինքը պրոֆ. Աճառյանը ցույց տվեց, որ չի կարելի բարբառների քանակի հարցը քարացած ձևով ընդունել: 1951 թ. հրատարակված «Հայոց լեզվի պատմություն» (2-րդ մաս) աշխատության մեջ նախօրոք մեզ հայտնի 31 բարբառների հետ դանում ենք նաև Խոտըջրի, Ամասիայի և Օրտուի բարբառները «Կը» ճյուղից (Ամասիայի ու Օրտուի բարբառները «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ համարված են Եվդոկիայի բարբառի ենթաբարբառները), Համարիկի ու Մեղրու բարբառները «Էլ» (էլիս) ճյուղից: Այսպիսով՝ հենց պրոֆ. Աճառյանը հայերենի բարբառների թիվը 31-ից հասցնում է 36-ի: Էլ չենք խոսում այն մասին, որ վերոհիշյալ աշխատության մեջ նա ընդունում է Հադրուծի, Շաղախի և Ղարադաղի բարբառների առանձին գոյությունը:

Պրոֆ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ իր ուսումնասիրած 31 բարբառների հետ տալիս է նաև հայերենի ենթաբարբառների ու խոսվածքների հարյուրից ավելի նմուշներ, որոնք բարբառագիտության համար անգնահատելի փաստեր են:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը, առաջնորդվելով պրոֆ. Աճառյանի ձևաբանական հատկանիշի սկզբունքով, 1939 թ. հայտնաբերեց հայերենի բարբառների նոր, թվով չորրորդ ճյուղը, որի մեջ մտնում են (ինչպես այդ մասին գրում է պրոֆ. Ղարիբյանը 1953 թ. հրատարակած «Հայ բարբառա-

¹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ XI:

դիտությունն աշխատության մեջ) թվով 8 բարձրառ. Պրոֆ. Էդ. Աղայանն ուսումնասիրեց այդ հայտնաբերված բարձրառներից մեկը՝ Մեղրու բարձրառը, և ապացուցվեց, որ, իսկապես, Մեղրու բարձրառը պատկանում է «Ա» ճյուղին:

Գիտական ուսումնասիրությունները շարունակվում էին: Առանձնապես սեղադրություն էր դրավում այն փաստը, որ Եվդոկիայի բարձրառի ենթաբարձրառներ համարված Ամասիան ու Մարսիանը իրենց սահմանական եղանակի ներկայի շարունակականը կազմում են կա (դա)-ով, օր, դրէմ դա, դ'էրթամ դա, փոխանակ դր դրէմ դօր, դ'էրթամ գօր-ի: Նկատի ունենալով այս, ինչպես նաև Բեյլանի, Սվեդիայի, Մարաշի ու Ջեյթունի բարձրառներում սահմ. եղանակի ներկա ժամանակի կազմությունը զա-ով կամ «ա» ձայնավորի՝ տվյալ բարձրառներում կրած հնչյունափոխությունների համաձայն զա (Բեյլան), զուէ (Ջեյթուն), զօ (Մարաշ), զու (Սվեդիա) ձևերը, պրոֆ. Ղարիբյանն ապացուցեց «Ա» ճյուղի անկախ դոյությունը: «Հա» ճյուղի առանձին դոյություն (Արարիկի և Քեսարի բարձրառներ) ապացուցմամբ հայերենի բարձրառների ճյուղերի թիվը դարձավ 6 (Ում, Կը, Լ, Ս, Կա, Հա), ինչպես և մեկ գրաբարակերպ՝ Խոտրջրի բարձրառը, իսկ դիտությունը հայտնի դարձան հայերենի 51 բարձրառներ:

Պրոֆ. Ա. Ղարիբյանի առաջարկած այս տեսակետը պաշտպանություն դնավ պրոֆ. Է. Աղայանի կողմից, որը 1954 թ. վերահրատարակված «Մեղրու բարձրառն աշխատության «Հայերեն բարձրառների դասակարգում» հավելվածում բնգունում է հայերենի բարձրառների 6 ճյուղ և մի բարձրառ էլ (Խոտրջրի)՝ գրաբարակերպ: Հենց այս հիման վրա կատարվեց բարձրառների նոր դասակարգում՝ ելակետ ունենալով բայի սահմ. եղ. ներկա և անց. անկատար ժամանակների կազմության եղանակը, այն սկզբունքը, որ ընկած է այդ ձևերի կազմության հիմքում:

Ըստ այսմ հայերենի բարձրառների յոթ ճյուղերը բաժանվեցին երեք մեծ խմբերի:

ա) ներկայի և անցյալի անկատարի ձևերը վերլուծական եղանակով կազմող բարձրառներ, դերբայավոր: Այս խմբի մեջ են մտնում «Ում», «Է» և «Ա» ճյուղերը:

բ) ներկայի և անցյալի անկատարի ձևերը գրաբարի ձևերի վրա որևէ մասնիկ ավելացնելով կազմող բարձրառներ, մասնիկավոր: Այս խմբի մեջ մտնում են «Կա», «Կը», «Հա» ճյուղերը:

գ) Գրաբարակերպ:

Թե ի՞նչ է բարձրառ, ի՞նչ է ենթաբարձրառ, ի՞նչ հիմունքով կարելի է այսպես կամ այնպես անվանել, այս հարցին լեզվաբանները տվել են ընդհանուր, խոսնափողական պատասխաններ: Երիտքերականները, առաջնորդվելով այն սկզբունքով, թե միայն անհատի լեզուն իրական դոյություն ունի, ասում էին, թե այնքան բարձրառներ կան, ինչքան խոսող անհատներ (Պաուլ)¹: Ֆրանսիացի խոշոր լեզվաբան Ֆ. դր Սոսյուրը, առարկելով նրանց, առաջ է քաշում այն տեսակետը, թե դոյություն ունեն միայն բնական բարձրառային հատկանիշներ, իսկ բնական բարձրառներ չկան կամ՝ այնքան բարձրառ կա, ինչքան՝ տեղ²:

¹ Տես Փ. Ժե-Կոսսյոր, Курс общей лингвистики, Москва, 1933, стр. 6.

² Նույն տեղում, էջ 182:

Ըստ Պրոֆ. Աճառյանի, եթե երկու անհատ իրար չեն հասկանում, այստեղ կա բարբառ, իսկ եթե հասկանում են իրար առանց դժվարության, կա ենթաբարբառ¹։ Այստեղից էլ քանի որ հնում չՀայաստանի զանազան գավառների ժողովուրդները իրօր հասկանում էին հեշտությամբ... այն տարբերությունները, որ կարելի էր նկատել զանազան գավառների խոսակցության միջև, կազմում էին ոչ թե բարբառային տարբերություններ, այլ ավելի ճիշտ բառով՝ ենթաբարբառային (էջ 125)։

Պրոֆ. Ա. Ղարիբյանն իր «Չայ բարբառագիտություն» (1953) աշխատության մեջ նշում է 12 հատկանիշներ, որոնցից մի խմբի առկայության դեպքում (հնչյունական և ձևաբանական հատկանիշներով) իրավունք ունենք խոսվածքը դիտել իրրե առանձին բարբառ։

Ելնելով վերոհիշյալից՝ հեղինակն իր այս աշխատության մեջ մի շարք խոսվածքներ (Դիագին, Ողմի, Հաճըն, Մարաշ) դիտում է որպես բարբառներ։

Հայագիտության մեջ վաղուց շոշափվել է այն հարցը, թե ինչ ծագում ունի կը (կու) մասնիկը։ Արսեն Այտընյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ գտնում է, որ «...հնոց կու մասնիկը՝ կայ ու բառերուն բաղադրությունն է, և թէ ամփոփմամբ ըստած է կ'ու նայի՝ փոխանակ կայ ու նայի...» («Քերականություն», էջ 76)։

Այս տեսակետին համաձայն է և պրոֆ. Պատկանյանը.

Պրոֆ. Մ. Արեղյանը, հակառակ Ա. Այտընյանի կարծիքին, գտնում է, որ կու մասնիկի հին ձևն է կոյ. որն սկզբնապես եղել է մի անկախ բառ «ահա» նշանակությամբ²։ Ըստ պրոֆ. Ա. Ղարիբյանի դա զոյ ձևն էր, որը միջին հայերենում պետք էր գրել կոյ (զոյ կարգալու համար)։ Դոյ և առհասարակ ոյ-ը միջին հայերենում տալիս է ու։ Ուստի՝ <զոյ> դու, իսկ ու-ի սղմամբ առաջացել է կր։

Բայց սա վկայում է այն մասին, որ կա, ռա-ով ներկա կազմող բարբառներն իրենցից ներկայացնում են բոլորովին մի առանձին ճյուղ, դա կա բառն է, որն իր իմաստով հավասար է «ահա» բառին. դա գրէմ — ահա գրում եմ։

Այս ընդհանուր հնչյունական փաստարկումներից հետո այժմ աշխատենք մի կոնկրետ բարբառի փաստերով ապացուցել «կա» ճյուղի մի նոր բարբառի ինքնուրույն գոյությունը³։

Պրոֆ. Աճառյանն իր «Չայ բարբառագիտություն» աշխատության մեջ Արարիկի բարբառի ենթաբարբառներից է համարում Կյուրինը, Տարենտեն և Կեսարիան։ «Արարիկի բարբառին չրջանը երկու մեծ ճյուղի վերածելու է. առաջին ճյուղին կը պատկանին Արարիկի բարբառն ու Տիվրիկի ենթաբարբառը. իսկ երկրորդին կը պատկանին Կյուրինի, Տարենտեի և Կեսարիո ենթաբարբառները» (էջ 216)։ Եռյն սկզբունքն է պահպանվում

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն (2-րդ մաս), էջ 123։

² Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 326—327։

³ Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիայի «Ցեղեկագրի» (հասարակական գիտություններ) 1954, № 7-ում տպագրած «Ближайшие задачи армянской диалектологии» հոդվածում պրոֆ. Ղարիբյանը տողատակ ծանոթության մեջ ասում է, որ լեզվաբան Զահուկյանի կողմից Մատենադարանի մի ձեռագրում հայտնաբերված են տվյալներ, որոնք ցույց են տալիս կա և հա ճյուղերի գոյությունը դեռևս 12-րդ դարում (տես էջ 61)։

1913 թ. լույս տեսած «Հայերէն գաւառական բառարան» աշխատութեան, ինչպէս նաև «Հայոց լեզվի պատմութեան» (2-րդ մաս) մեջ: Վերջին աշխատութեան մեջ ուշագրավ մի կետ կա, այն է՝ հեղինակն ավելի շուտ տերիտորիալ նկատառումներով է Տիւրիկը, Կյուրինը, Տարենտեն, Կեսարիան ու Յոդլատը Արարկիւրի բարբառին միացրել: «Արարկիւրի բարբառը... խոսվում է Փոքր Հայքի հարավային մասում. գլխավոր քաղաքներն են՝ Արարկիւր, Տիւրիկ, Կյուրին, Տարենտե, ինչպէս նաև Կեսարիայի և Յոդլատի գյուղերից մի քանիսը (մնացյալը լինելով թրքախոս): Շրջանիս մեծագույն կենտրոնը լինելով Արարկիւրը, բարբառը կոչեցինք սրա անունով՝ քնդգծումս իմն է — Ս. Ա.)¹:

Նկատենք նաև մի հանգամանք. պրոֆ. Աճառյանը «Քննութիւն Վանի բարբառի» աշխատութեան մեջ, խոսելով Վանի բարբառի և նրա ենթաբարբառը համարվող Տիատինի, Մոկքի, Ողմի մասին, նշում է. «Ենթաբարբառների սահմանը միշտ խախտւում է. այս հարցի որոշման մեջ (Վանի և շրջակա գավառների խոսվածքի — Ս. Ա.) ես նկատի եմ առել նաև շրջանի մեծութիւնը կամ կարևորութիւնը»²:

Մեզ հետաքրքրող հարցը լուծելիս մենք կառաջնորդվենք հենց իր՝ պրոֆ. Աճառյանի առաջ քաշած այն սկզբունքով, թե բարբառը գավառի հետ կապ չունի և Վերնա ոչ թե ամբողջ գավառի մը, այլ և լոկ գյուղի մը կամ քաղաքի մը մեջ խոսվիլը³:

Հանգուցյալ պրոֆեսորը հետազայում չի անդրադառնում Արարկիւրի բարբառի հարցին. մենք կարծում ենք, որ հատուկ ուսումնասիրութեան նյութ դարձնելու դեպքում՝ իր արդեն իսկ նշած չափազանց արժեքավոր դիտողութիւնները և նոր փաստերը նրան կհանգեցնեն նույն տերիտորիայում մի ուրիշ բարբառի էլ առկայութեան գաղափարին: Մենք հաստատ համոզված ենք, որ Արարկիւրի բարբառի բռնած տարածութեան վրա մենք ունենք իրարից բոլորովին անկախ երկու բարբառներ, ընդ որում՝ յուրաքանչյուրը առանձին ճյուղի ներկայացուցիչ: Պրոֆ. Ա. Հարիրյանը գտնում է, որ Արարկիւրի բարբառը պատկանում է «Հառ» ճյուղին: Ինչպէս վերևում նշեցինք, նույն կարծիքի է նաև պրոֆ. Է. Աղայանը: Իսկ ինչ վերաբերում է Կեսարիայի բարբառին, դա «Կառ» ճյուղի բարբառ է, նույնիսկ «Կառ» ճյուղի բարբառների օջախներից մեկն է. Կեսարիայի բարբառն ասելով հասկանում ենք Կեսարիայի Ալմարագ — Ֆանասա գավառներում, ինչպէս նաև Աֆրատիում խոսվող լեզուն, Տարենտեում (Դարանդա), Յոդլատի գավառի Ուրնաջ, Մանթաշա, Չախմախ, Էարահալլը և շատ ուրիշ հայախոս գյուղերում խոսվող լեզուն, որոշ իմաստով՝ Թումարգայում ու Չումախլուում խոսվող լեզուն (վերջին երկուսը սահմանակից լինելով Հաճընի բարբառին՝ խիստ ազդվել են նրանից):

Այժմ փորձենք փաստերով ապացուցել մեր վերևի եզրակացութիւնը՝ դիմելով համեմատութեան մեթոդին:

1) Հնչյունական տարբերութիւններ.

Արարկիւրի բարբառն ունի եռաստիճան խլազուրկ բաղաձայնական

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն (2-րդ մաս), էջ 348:

² Հ. Աճառյան, Քննութիւն Վանի բարբառի, Երևան, 1932, էջ 12:

³ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտութիւն, էջ 36:

սխտեմ (ր', ր, փ), մինչդեռ Կեսարիայի բարբառն ունի երկաստի-
ճան խլաղուրկ բաղաձայնական սխտեմ (ր, փ):

Հնչյունական այս մեկ կարևոր տարբերություն կողքին նկատելի
են հետևյալ փոքր տարբերությունները:

ա) Արարկիրի բարբառում բառասկզբում ձայնավորից առաջ
լսվում է հ հագագը, օրինակ՝ հաղիք (աղիք), հարի (արտ), հընգէլ
(ընկեր), հինքը (ինքը) և այլն, մինչդեռ Կեսարիայի բարբառում
բառասկզբում հ հագագ չի լսվում:

բ) Գրաբարյան այ երկրարբառը Արարկիրում դառնում է ա, օր.
փայտ > փադ, մինչդեռ Կեսարիայում՝ այ > է (ա), ինչպես՝ փայտ > փադ:

գ) Արարկիրի բարբառը գրաբարյան ոյ երկրարբառի դիմաց ունի
ո (օ), օրինակ՝ լոյս > լօս, թոյլ > թօլ, բաղառություն են կազմում
միայն 2 բառ՝ բունգալ և հուս (բոյնկալ, հոյս) (տես Մելիք
Ս. Դաւիթ-բէկ, «Արարկիրի գաւառաբարբառը», «ՀԱՅ», 1900 թ.):

Կեսարիան ոյ-ի դիմաց ունի ու (իւ), օր.՝ լոյս > լուս, թոյլ > թուլ:

դ) Արարկիրի բարբառը գրաբարյան իւ-ի դիմաց ունի ի. օր.
ալիւր > հալիր, Յարութիւն > Հարթին, քիւն-ը միշտ տալիս է քին:
Այս օրենքը տարածվում է նույնիսկ թուրքերենից փոխառյալ բա-
ռերի վրա, օր.՝ ալթուսթ > ալթիսթ, քուրք քիրք և այլն: Կեսա-
րիայի բարբառում իւ-ն դառնում է ու, օր.՝ ալիւր > ալուր, գողու-
թիւն > գողութուն և այլն:

Պրոֆ. Աճառյանը, որը Մելիք Ս. Դաւիթ-Բեկի «Արարկիրի գաւա-
ռաբարբառը» («Հանդէս ամսօրեայ», 1900—1903 թթ.) աշխատության հի-
ման վրա է կատարել բարբառիս ուսումնասիրությունը, «Գաւառական
բառարանի» «Հայ բարբառներու ձայնական ուրվագիծ» բաժնում գրա-
բարյան ոյ-ի դիմաց Արարկիրի բարբառում դնում է ու, իսկ իւ-ի դիմաց՝
նույնպես ու: Մեր կարծիքով հեղինակն այստեղ ավելի շուտ գրաբարյան
այդ երկրարբառների՝ Կեսարիայի բարբառում կրած փոփոխություններն է
տվել, քան թե Արարկիրի բարբառում:

2) Ձևաբանական տարբերություններ.

ա) Արարկիրի բարբառն իր սահմ. եղանակի ներկան կազմում է
հետևյալ ձևով. եթե բայն սկսվում է ձայնավորով, այդ դեպքում գործա-
ծում է կ' (գ) սկզբից և ը, նը՝ վերջից, օր.՝ գ'ըսիմը, գ'ըսէսը, գ'ըսանը:
Իսկ եթե բայն սկսվում է բաղաձայնով, այդ դեպքում գերբայից հետո
գնում է ը կամ նը, իսկ գերբայից առաջ՝ ոչինչ: Արարկիրի բարբառում
ը-ի փոխարեն նը գրվում է այն դեպքում, երբ խոնարհվող բայի ձևը
վերջավորվում է ն բաղաձայնով կամ ձայնավորով: Այս ձևով է արտա-
հայտվում նաև չարունակականի գաղափարը, օր. խօջան ձան ձուն չի հա-
նէր[ն]ը. ինքաւր գ'էսէս[ն]ը, գ'ըսանը:

Կեսարիայի բարբառը սահմ. եղանակի ներկա ժամանակի գաղափարն
արտահայտում է գա (կա < կամ)-ի միջոցով, օր.՝

ներկա

անց. անկատար

դա գրէմ

դա գրէնք

դա գրէրի

դա գրէրինք

դա գրէս

դա գրէք

դա գրէրիր

դա գրէրիք

դա գրէ

դա գրէն

դա գրէր

դա գրէրին

Ինչպես հայտնի է, հայերենի բոլոր բարբառներն իրենց ներկա ժամանակի կազմությամբ բառացի առում են՝ գտնվում են գործողության մեջ, կամ (ևմ) գործողության մեջ: Կա գրեմ — ահա գրեմ — գրելս կա, կամ (ևմ) գրելու գործողության մեջ:

Պետք է ենթադրել, որ Կեսարիայի բարբառում ներկա և անցյալի անկատար ժամանակներն սկզբում արտահայտվել են

գամ գրէմ	գամ գրէրի
գաս գրէս	գաս գրէրի
գա գրէ	գա գրէր
գանք գրէնք	գանք գրէրինք
գաք գրէք	գաք գրէրիք
գան գրէն	գան գրէրին ձևով:

Հետագայում, լեզուներում գործող համարանության և ընդհանրացման օրենքով, եզ. 3-րդ դեմքի գա ձևը տարածվում է բոլորի վրա: Երա լավագույն իլյուստրացիան նույն բարբառի սահմ. եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակների ժխտական կազմության ձևն է.

Ներկա	անց. անկատար
չի քամ գրէմ	չի քար գրէրի
չի քաս գրէս	չի քար գրէրի
չի քա գրէ	չի քար գրէր
չի քանք գրէնք	չի քար գրէրինք
չի քաք գրէք	չի քար գրէրիք
չի քան գրէն	չի քար գրէրին

Առաջին հայացքից տարօրինակ թվացող «քար» ձևը նույն կա-ն է. նախ մենք այստեղ ունենք ը բաղաձայնի հավելում. բայի սահմ. եղ. անց. անկատար ժամանակն ունի ը. այս օրենքը բացառություն չգիտե: Կ>ք հնչյունափոխությունը տեղի է ունեցել վերևում մեր նշած պատճառով, իսկ ա>ս հնչյունափոխությունը ը-ից առաջ բարբառումս տարածված երևույթ է, ինչպես՝ գա խաղարի, գա թաղարի, գա խաղար և այլն: Միայն թե այստեղ համարանության և ընդհանրացման օրենքը նույնպես գործել է լրիվ չափով, ինչպես հաստատական խոնարհման ժամանակ:

Այս բոլորը ապացուցում է պրոֆ. Ղարիբյանի հետևյալ դրույթը. «Երբ խոնարհումը չի կատարվում դերբայով, ինչպես է ԿԸ, ԿԱ և ՀԱ ճյուղերի բարբառներում, այդ դեպքում դեմքի վերջավորությունը և գործողության գաղափարը արտահայտվում են բայի խոնարհված ձևերով, իսկ գործողության մեջ լինելու գաղափարն արտահայտվում է գոյ (գո, գու, կու, կը), կա (գա, գու, գո) և հա, հայ (ահա) մասնիկներով... Սա ցույց է տալիս, որ բոլոր լեզուները ժամանակների գաղափարը սկզբից արտահայտել են առանձին բառերով¹»:

Այսպես է սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակների ժխտական ձևերի կազմությունը Կեսարիայի բարբառում, մինչդեռ Արարիկի բարբառը, ինչպես շատ ուրիշ բարբառներ ու արևմտա-

¹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 188—189:

հայ գրական լեզուն, անորոշ դերրայի լծորդություն լրացածայն ընդ փոխարինելով ստանում է սահմանականի ժխտական դերրայ, որի հետ գործածում է օժանդակ բայը և ժխտականով, օր.՝ չէմ բոթնար[ն]ը, չէի սղար[ն]ը և այլն (օրինակները վերցրել ենք Մելիք Ս. Դավիթ-Բեկի աշխատությունից):

բ) Պայմանական եղանակի կազմությունը. Արարկիրի բարբառում այս եղանակում հանդես է գալիս զու մասնիկը, որը կարող է լինել և՛ նախադաս, և՛ ետադաս. նախադաս լինելիս ստանում է գործողության որոշակիություն իմաստ, նրբերանգ (սահմ. եղանակի ապառնի ժամանակին մոտեցող), իսկ ետադաս լինելիս՝ ավելի շուտ ցանկություն արտահայտության նրբիմաստ ունի. Եթե բայն սկսվում է ձայնավորով, այդ դեպքում ետադաս զու-ի հետ բայի սկզբում գրվում է նախադաս գ' (գ < գու), օր.՝ դէսնամ դու, դէսնայի գու, բայց և՛ գ ուղիմ գու, գ ըսէի դու:

Եթե օր զօխսանը ինը լիրանէրը զըրգէցիր հընձի՝ հալրաթ մէգալ մէգ հագ-նալ զըրգէս գու:

Մելիք Ս. Դավիթ-Բեկի վկայությամբ, երբեմն լրացանով սկսվող բայերն էլ սկզբից ունենում են զու, օր.՝ գու գրիմ գու, դու բոռամ դու և այլն: Սա, մեր կարծիքով, սոսկ բարենշյունություն համար է արված:

Այլ է պայմանական եղանակի կազմությունը Կեսարիայի բարբառում. բարբառս գրարարյան ներկա ձևերի վրա գ', զը (կ', կը) ավելացնելով է ստանում պայմանականը, օրինակ՝

պայմանականի սպառնի

զը գրէմ	զը գրէնք
զը գրէս	զը գրէք
զը գրէ	զը գրէն

պայմանականի անցյալի սպառնի

զը գրէրի	զը գրէրինք
զը գրէրիր	զը գրէրիք
զը գրէր	զը գրէրին:

Կեսարիայի բարբառի առանձնահատկություններից են նաև.

ա) Անորոշ դերրայի սեռականը, որն ստանում է կրկնակի սեռական նշան, օր.՝ մընալույի, խօսէլույի, գալույի, էրթալույի և այլն: Ինչպես նշում է պրոֆ. Աճառյանը, այս երևույթը չոչ մէկ բարբառի մեջ գոյություն ունի:

բ) Գործիականի օր մասնիկը, որը գրարարյան Ա հոլովման բառերի հոգնակի գործիականի աւք > օք վերջավորությունն է, բայց այստեղ գրվում է և եզակի գործիականի վրա, օր.՝ ձառքօք, խէլքօք:

Զխոսելով այն մեծ տարբերությունների մասին, որ կան երկու բարբառների (Արարկիրի ու Կեսարիայի) հոլովման ու խոնարհման սխառեմներում, կարծում ենք, որ բերված փաստերը բավական համոզեցուցիչ են և իրավունք են տալիս մեզ՝ Կեսարիայի ենթաբարբառը գիտելու իրրև ինքնուրույն բարբառ:

¹ Մելիք Ս. Դավիթ-Բեկ. Արարկիրի զավառաբարբառը (ՀՀԱ, 1900, էջ 251):